ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՐՏԱՀԵՐԹ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

26.07.2019թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 10.07.2019թ. թիվ 01/17.1/8186-19 գրությամբ տրված հանձնարարականը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանի (հանձնաժողովի նախագահ), ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի առաջատար մասնագետ Արմեն Շահվերդյանի, ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Նունիկ Ասրյանի, ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Դավիթ Թամարյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ Էդգար Հախվերդյանի և կրթության բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Բարոյանի կողմից իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, հողօգտագործման և կրթության ոլորտներում, ինչպես նաև համայնքային ենթակայության 6 նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

1. Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական և մասնագիտական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

---

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Ալավերդի համայնքի ղեկավարին:

Ալիկ Սահակյան _____

Արմեն Շահվերդյան _____

Նունիկ Ասրյան _____

Դավիթ Թամարյան _____

Էդգար Հախվերդյան _____

Անահիտ Բարոյան _____

Վաղարշակ Եղիազարյան _____

Համայնքի ղեկավար՝
Սասուն Խեչումյան _____